

## ԵԼԻԶՈ ՕԺԵՇԿՈ

Gloria victis

(Փառք յաղթուածներին)

Թարգմ. ոռոց.

I. Հայութաբարձր Ճամփարակ Ճամփարակ Ճամփարակ

**Ս**աւառնում էր հետաքրքիր անհանգիստ Քամին աշխարհի վրայ, լսում ջրերի, արտերի, ճանապարհի ծառերի, դաշտացին ծաղկիների սոսափիւնն ու պատմուածքները և—վշշումնա վշշում էր ամենի մասին, ինչ որ տեսնում, լսում էր լայնատարած, ընդարձակ աշխարհի երեսին ու ոլանում . . . մինչեւ որ գալիս համնում է ջրերով, կանաչներով ու ծառերով հարուստ այն երկիրը, որ կոչււմ է կիտովական Պօլէսիա:

**Հ**էյ, արագասլաց Քամու համար լայնարձակ, անսահման տարածութիւն, որ ծայրէ ի ծայր լեցնում ես երկինքն անտրգել ու յաւէտ պահպանող հարթութիւնները: Ո՛չ մի սար և ո՛չ մի բլուր, որին զարնուել կարողանար արագաթե Քամին. ո՛չ մի բարձրութիւն, որ արգելել կարողանար նրա թռիչքը: Էլե մութ անտառը կուցէ մռայլուած դէմ ելնէր և անսահման ճառագայթների ու նրանց վրայ տարածուած ջրերի գլխին մի խօսք շշնչար—գաղտնիք:

Բայց անտառը Քամուց գաղտնիք չունի. նրանք բարեկամներ են: Քամին մուտք է գործում անտառի խորքը, ծայրէ ի ծայր անցնում է մացառոււտները, որոնք պատմում են նրան ինչ որ տեսել, ինչ որ լսել են: Խրաբ գիրկն ընկած, աստղազարդ գիշերները, ձիւնաշատ, լսյո օրերը, աշնանային թխպամած, մռայլ, անձրեկային գիշերները երկու բարեկամները երկար զրոյց են անում իրաք հետ:

Այս անգամին Քամին սաւառնում էր Պօլէսիայի վրայով, երբ ամառնային արեք թերթուել էր արեմուտք և նրա ճառագայթների վրայի տակ արշալոյսի պէս կարմըել էլն մարգա-

գետնի մեխակները, և ծիածաննի գոյն հագել ջրերը: Դանդաղ հսուռմ էին ջրերը երենց բազմաթիւ հուներով, պլալալով մասնիշակի, ծիրանի և ոսկու գոյներով ... իսկ նրանց վրայ՝ օդի մէջ հետազնեաէ տարածւում և աճում էր խորին լուսութիւն:

Քամին չէր խանգարում լուսութիւնը: Նա այն քամիներից չէր, որ մռնչում, շառաչում, դղրդեցնում ու տակնուվեր են անում: Նա այն քամիներից էր, որ սիրում են աշխարհը: Նա սաւառնում էր աշխարհի երեսին, նրա աւանդութիւններն ու հեքիաթները, նրա անցած գուցերը, դուրս ժայթքած հառաչանքները, անցեալ պատերազմների արձագանքը հաւաքելու հաւաքելու նրա վերջին յոյսերը, ահոելի տանջանքները, նրա երդերի արձագանքները, ու տանելու հեռուն՝ տարածութեան, ժամանակին, յիշողութեան ու սրտերին . . .

Անցնում է արագաթուիչ Քամին ընդարձակ մարդագետինների վրայով և քնքոյշ նազանքով շայում կարմրագոյն մեխակներն ու թրթնջուկը, մեղմիկ թրվուցով ջրի երեսին ծիածանագոյն թեթև ալիքներ առաջացնում, երբ յանկարծ նրա առաջ բացւում է միւսներից միանգամայն տարբեր ջրի մի այլ շերտ, որ անշարժ կանգնած է մարդկային ճեռքերով շենուած առաջանում:

Քամին զիտէր, թէ ինչ ջուր էր այդ և ինչպէս էր կուլում. նա կէս դար առաջ եղել էր այստեղ և այդ ժամանակից յայանի էր նրան, որ դա արքայական ջրանցքն է: Հէյ, բաց կապտաւուն ու ներհակ ջրի շերտիկ, միթէ կարող ես դու արգելք հանգիստանալ արագաթուիչ Քամուն:

Թիթեռը ծովափնեայ կանաչից դեռ չէր թռել բոշխի (օսեկա) կատարը, այնտեղ քուն մանելիս իր ոսկեզօծ թևեկները հաւաքելու, երբ Քամին անցել էր արգէն արքայական ջրանցքը և դէմ առ դէմ կանգնել լայնատարած, բարձրաբուն, ստուերախիտ ու նախշուն անտառին: Ամբողջ կէս դար էր անցել այն օրից, երբ նա թողեց այստեղը, այնուամենայնիւ նա իսկոյն ճանաչեց իր բարեկամին:

— Ինչպէս ես, ուրախ սլցով հարցրեց նա:

Անտառը խշալլով պատասխան տուեց, Բարսի, հազար բարով, սիրելի շրջմուիկ:

Քամին անտառ է մանում ուրախ, զուարթ, կայտառ, թրվուում է եղենիների, թխտենիների, լաստենիների ու կաղնիների, մէջ, թևերով դրկում է հին բարեկամների բները՝ ողջոյնի համբոյքներով ծածկելսվ նրանց ճիւղերը:

— Ինչպէս էր, շշնջում ու վշշում էր նա. — Ի՞նչ տե-

սաք, ի՞նչ լսեցիք այսքան ժամանակ. ի՞նչ էր լինում, ի՞նչ կատարւում այստեղ՝ ձեր շուրջը:

Խոկ հին եղենիները, թխանիներն ու կաղնիները շարժեւով իրենց տարածուած ճիւղերը՝ պատասխանում էին.

— Հրաշալի դործեր կատարուեցան այստեղ, զարմանալի գործեր տեղի ունեցան մեր շուրջը: բարձրանչչին, փոթորկալից գործեր՝ լի հեծկլտանքով, հառաջանքով ու աղաղակներով . . .

— Ի՞նչ, ի՞նչ էր կատարւում այստեղ, ո՞րպիսի, ո՞րպիսի գործեր. անսովոր արագութեամբ մոնչում, հարցնում էր Քամին:

ԶԵ՞ որ հէնց զրա համար էլ գոյութիւն ունէր նա՝ երկրային գործերը հաւաքելու և տարածելու ամսող աշխալի ծայրերը, երբեմն էլ մինչև երկինք հանելու ու երկնքին ցոյց տալու . . .

Անտառում պրպառում էին մայր մանող արել ճառագայթները. լայն սոկեզօծ գօտիներով զարդարել էին նրանք գարտւոր ծառերի բները. բազմաթիւ ճաճանչներով փայլվելում էին նրանք մամուռների և ճարխոտերի (սոորոտնիք) վրայ. վառում էին բացուած մասրենու սղոցեզր, սրտածե թերթիկները:

Դատ վայրի վարդեր, խոտեր և ճարխոտեր կային այս լայն ընդարձակ, չորս կողմից բարձր, հսկայ ծառերով շրջապատուած մարդագետնի վրայ: Այստեղ՝ այս մարդագետինը մուտք գործեց Քամին և անմիջապէս մի արտասովոր արագութեամբ այնտեղ սաւառանել սկսեց: Նա բարձրանում իջնում էր, հարց ու փորձ անում, պարստում և հազար ու մի ճայնով մոնչում:

— Ի՞նչ է կատարուել այստեղ, ի՞նչ է կատարուել այստեղ՝ այս մարդագետնի վրայ: Մի առանձին արտասովոր բան պէտք է պատահած լինի այստեղ . . . Ես արեան հոտ եմ առնում: Ահ, երկար, շատ երկար է արձակում երկիրը իր որդւոց մարդկանց արեան հոտը: Ես հառաջանքներ եմ լսում, մհ, երկար, շատ երկար են մնում օդի մէջ, երկնակամարե տակ՝ նրա զաւակների մարդկանց հառաջանքները: Այստեղ կու է եղել, այստեղ մահ է պատահել. այստեղ վերքեր, ճիաների գոփիւն, աղաղակներ են տեղի ունեցել: Խոսեցէք, սիրե՛լի, անդի՞ն ծառեր, ասացէք, պատմեցէք, գէհ, շուտ արէք, խռուցէք,

Ծառերը լուռ էին. նրանց ոստերի միջով միայն մի կարճատե թեթե ուարսոււ անցաւ, կարծես յանկարձակի ցըտեց

առաջացած, որ տարօրինակ էր թւում այս տաք ամարային օրին:

Նոյն այդ ըովելին գօրեղ թափով, ըուռն ուժգնութեամբ մոնչաց Քամին, իրաք յետելից հարցեր տեղալով.

—Իսկ այս ի՞նչ է, ի՞նչ բան է սա. սա ընութեան ստեղծածը չէ, սա մարդու ձեռքի գործ է: Բնութիւնն այստեղ ոչ մի բլուր չի կանգնել, այս բլուրը մարդիկ են կանգնել. ով ով է կանգնել այդ բլուրը. ինչու, ի՞նչ նպատակով... Իսկ բլուրի գագաթին մանիշակների զանգակիկների մէջ ցցուած այդ փոքրիկ խաչը. Աստուած իմ, ինչքան փոքր, հասարակու խղճուկ է: Ինչի՞նշան է այդ: Պատմեցէք ծառեր, աղաջում եմ, պատմեցէք:

Այն ժամանակ բարձր, զօրեղ կաղնին, որի սազարթախիտ կախ ընկած ոստերը կազմել էին նրա միջուքը, վայելակազմ թիստենին, ամբողջապէս ծածկուած երկար, մինչև գետին հասնող խոպոպիքներով և բարեձև վեր ձգուած եղենին Եր սուր գագաթով, վշտա զգեսաով, պատախանեցին նրան միաբերան՝ խուլ ձայներով:

—Գերեզման է այդ:

—Որչափ մեծ, որչափ մեծ, որչափ մեծ գերեզման, զառմացաւ Քամին:

Թիստենին հառաչեց.

—Եւ խաչը այդչափ փոքր:

Իսկ կաղնին խօսեց.

—Այստեղ նսջում են զոհաբերուած, քաջարի շատ որը աեր... .

—Սրտերը շատ, իսկ խաչը մէկ. կրկին զարմացաւ Քամին: Թիստենին կրկին հառաչեց, և այդչափ փոքր, այդչափ խղճուկ:

Բարեձև փշազարդ եղենին գլուխը շարժեց և խօսեց.

—Ես ամենաբարձրն եմ այս անտառում, ես տեսնում եմ բռլորից հեռուն և գիտեմ—երկիր վրայ կան պատկռւած և անսպասեկ հերոսներ, արձաններ ունեցող և չունեցող հերոսներ:

Ակնածութեամք շշնչաց Քամին.

—Աւ բեմն լըս հերոսների գերեզման է:

—Անանուն հերոսների. պատասխանեց եղենին:

Իսկ մանիշակի խիտ զանդակիկները, որ աճել էին խաչի շուրջը, մեղմ զօղանջեցին.

—Ատզամեռ, վազաթառառամ հերոսների...

—Եւ տանջանքներով մեռած հերոսների, մըմնջաց բլրե

գագաթին բուսած վայրի վարդենին ... Այդ ասելով նա պոկեց իր սղոցեզը, սրտաձև թերթեկներից մէկը և ձգեց գերեզմանի վրայ:

## II.

Տերեմիկը թիթեռնիկի նման ընկաւ բարձր խոտերի մէջ, և վարդենին հառաչեց.

— Միայն ես եմ ծաղիկներ ձգում այս գերեզմանի վրայ: Համարեա թէ կէս դար է արդէն, որ ամեն ամառ ես հոտաւէտ թերթեկներս եմ ձգում նրանց վրայ ... միայն ես:

Մանիշակի զանգակիկները կրկին զօղանջեցին.

— Իսկ մենք հնչեցնում ենք թաղման երգը. կէս դար է արդէն, որ մենք ամեն ամառ հնչեցնում ենք այս գերեզմանի վրայ թաղման երգը ... միայն մենք ...

Սրագաթե Քամին խոցուած փարուեց գերեզմանի բլրակին և մարեց ... Մարդկանց աչքերին նա աննկատելի էր, նրան կարող էին տեսնել միայն ծառերը, խոտերն ու ծաղիկները: Նրա բիւրեղից և թիթեղներից շինուած, թափանցիկ ու երերուն մարմինը օճանման ոլորումներով ծածկեց գերեզմանի բլրութը: Մայր մանող արեի արտացոլումները հաւաք ու մէկ ոտիենաձանչ կայծերով շառագունեցան: Նրանք՝ այս փայլուն արտացոլումները, փայլիլում ու շողշողում էին նրա լայն թևերի վրայ, որոնք հեղուկ բիւրեղի ալիքների նման իջել էին մարդագետնի կանաչների վրայ. նրանք փալիլում էին նրա բացդոյն գանգութների վրայ, որոնք եղեամեց հիւսած սարգեստայնի պէս տարածուել էին դաշտի երեսին. նրանք փալիլում էին նրա վայելչակազմ ուսերի վրայ, որոնք բիւրեղեայ սիւների նման ձգուում էին պէպի ծառերը ... Իսկ օգի մէջ լողում, տարածում էր աղերսող, խաղաղ մլոմուջն: Խոսեցիք, արագաթե Քամու հին ընկերներ: Դուք, որ դարեր էք անցկացնում սուրբ մտահոգութեան մէջ և ձեր, ամպերին հասնող կատարներով պահպանում էք անհուն, մեկուսացած երկնակամարը, դուք, երկրային գործերի մտազբաղ մկաներ, դուք, անաւաների անանուն, մուացուած, անթիւ անհամար գերեզմանների բազմալեզու և միենոյն ժամանակ լուս վկաներ, ո՛, երգեցէք ինձ այդ գերեզմանի մասին կեանփի երգը, մահուան երդը, որ ես կարողանամ ձեր երգերը երկինք հասցնել և ցոյց տալ նրան, ապա տանել երկրի ծայրերը՝ հեռուն, տարածութեան, ժամանակին, յիշողութեան, սըտերին ...

Արեի հրեղէն գնդը վերջին պուռենկն էլ իջաւ հօրեղոնից ներքեւ ու անյայտացաւ։ Նորա փոխարէն անտառի յետեր բարձրացաւ բոցավառ ու ծիրանագոյն վերջալոյսը և լցրեց անտառը հրդեհի փայլով։ Օգի մէջ՝ ծառերի տերեների, թփերի ու խոտերի վրայ, բորբոքուող արեան կաթիլների նման փուռեցան շողացող, պայծառ լուսնի բոցավառ ու կարմիր թիթեղները։

Հին, հզօր կազնին իր թաւ միրուքի արեան բորբոքուող կաթիլները ցոլացնելով, բաց արաւ, տարածեց իր ընդարձակ ոստերը, օգի մէջ շարժեց ու այսպէս խօսեց · · · · · · · · · · ·

Եկան նորա այստեղ մի քանի հարիւր հոգով և աղմկալի բազմամարդ բանակ դրին։ Նրանց զգեստները բազմազան էին և փալիլում բազմատեսակ զէնքերով։ Միատեսակ էր բոլորի զգեստի միայն մի մասը. այդ նրանց քառանկիւնի գլխարկին էր՝ մոռագոյն կամ զաշտացին տատասկափշի երանգով. և յատուկ էր ամենքին մի ընդհանուր գիծ—երիտառարդութիւնը։ Նրանց դէմքերի վրայ փթթում, տենչերսվ ու յափշտակութեամբ լի աչքերի մէջ փայլում էր ինքը՝ կեանքի գարունը, վառ, ծաղկեալ գարուն, որին դեռ չէր խանձել աշխատանքի և կոխիների տօթը։ Նրանք բանակ դրին, հիւսածոյ ոստերից մի քանի վրաններ կազմեցին, տռաջնորդի, լաւագոյն ձիերի, ապագաւ վիրաւորների համար. գարսած խարոյկի վրայ երենց համար ընթրիք պատրաստեցին և գործերը վերջացնելուց յետոյ, երբ անտառի գլխին՝ երկնակամարի վրայ, պլալացին աստղերը, դէպի երկինք և դէպի աստղերը բարձրացաւ նրանց զօրեղ ձայների խմբական օրհներգը, որի մէջ հնչում էր բողոք, յոյս և աղերսանք։ Օրհներգը մենք ծառերս խօսը մտորումով կուռմ էինք և մեղմ սոսափիւնով ձայնակցում։ Եւ տարակուսանքով լի մեր խցոցը շշնչում էր.—արդե՛ք, ի՞նչ է լինելու, արդե՛ք ի՞նչ է լինելու։

Նրանց առաջնորդը սուրբ անուան տէր մի մարդ էր։ Այդ անունն է Ռոնւալդ Տրաուգատ։ Դու կասեռ՝ ինչո՞ւ այդ անուեր սուրբ է։ Սուրբ է այդ անունը, որովհետեւ յեշելով Առտուծոյ ուխտը, թողեց նա կնոջն ու զաւակներին, հարստութիւնն ու հանդիսար, ամենը, ինչ որ գրաւում, ինչ որ ուրաւխութիւն է պատճառում, ամենը, ինչ որ կեանքը գրաւեց ու հրապուրիչ է գարճում, ինչ որ երջանկութիւն ու հաճոյք է պատճառում, և իր ժողովրդի խաչն ուսերին՝ գնաց նա այն հրեղէն սեան յետեկց, որ ընթանում է երկը վրայով և ...

այրուեց նրա մէջ: Նա ո՛չ այստեղ այրուեց, ոչ էլ այս գերեզմանի մէջ է ննջում: Նա ննջում է ինչ որ հեռու տեղ. սակայն այս դաշտն եկաւ նա այն մի խումք մարդկանց գլուխն անցած, և մենք՝ ծառերս, զարմացմամբ նայում էինք նրան:

Հին ժամանակ, երկիրը ճնշող ստրկութեան տակ, շատ անդամ է բարձրացել այդ հրեղէն սիւնը, որը տանում է դէպի ազատութեան խոստացուած երկիրը. և մարդկանց խմբեր հետեւ են նրան: Միենոյն սիւնը բարձրացաւ և այս անդամ ու դարձեալ մարդկանց խմբեր գնացին նրա յետեւց: Այս խումքն էլ յշշեալ խմբերից մէկն էր, և նա առաջնորդում էր նրան:

Մենք նայում էինք նրա սեահեր գլխին, խօհուն աչքերով, մանկական ժպիտով: Նրա աչքերը խելացի էին և թափածոտ. ըստ երեւութիւն մարդկանց թախիծը շատ անդամ մտքի երկուորեակն է. իսկ ժպիտը թարմ, մարդարտանման էր՝ խառն մանկական կամ կանացի թուլութեամբ:

Եղերական նախախնամութեան աներեւոյթ մատը շատ վաղ էր ակօսել նրա ճակատը՝ խստութիւն, երբեմն էլ դաժանութիւն արտայատող կնճիռներով:

Ու լսեցինք մենք նրա ձայնը, պողպատի պէս հնչուն ու հնչեղ, հրամայողական, երբեմն նոյն իսկ սարսափ ազգող: Այդպէս պէտք է հնչելիս լինէր Լեռնիդասի ձայնը Թէրմովիլէի կիրճում:

Ո՞րտեղից գիտենք մենք Լեռնիդասի մասին. մեր նախապատմել են նրա մասին արագաթե Քամիների նախապատերը, և ո՛չ ոք երբէք չի իմանայ, որտեղ և ինչ կերպ են պատմում մեծ և անմահ գործերի մասին ծառերը ամպերին, ամպերը՝ աստղերին, աստղերը՝ ոգիներին. իսկ երգերն ու հերեաթները, լուրերն ու պատմուածքները լողում են ու լողում տիեզերքի պէս լայնածաւալ և յաւիտենականութեան պէս երկար ...

Լեռնիդասը, Թէրմովիլէան կիրճը իր մարդկանց գիտակներով ծածկելիս հաւատացած էր արգեօք, որ ստրկութիւնը ստք չի կոխելու յունական երկիրը. եթէ հաւատացած էր՝ ուրեմն ուրախութեամբ պէտք է կանգնէր արնոտ պատնէշը, և իր անձն էլ իրքեւ կնիք պէտք է գնէր նրա վրայ:

Ուօմուալդն այդպէս չէր մտածում. նա փորձուած էր կուուի գործերում և փորձառութիւնը նրան հեռատես էր դարձել. նա տեսնում էր, որ կուիւների և զոհերի ցերեկուան պիտի հետեւի ու, սարսափելի գիշերը:

Այնու ամենայնիւ նա դնում էր և իր յետեւից ուրեշնե-

բն տանում: Այդշախ մեծ էր այն ժամանակ երկրի երեսին կանգնած հրեղին սեան զօրութիւնը, այդչափ ուժգին էր խռուտացուած, անձկալի, ջերմ սիրուած աղատութեան—երկրի կորուստը և այդպէս ժանր՝ նրա ժողովրդի անտանելի խաչը...»

Սակայն այժմ նրա մասին չէ որ պիտի պատմեմ: Նրա մասին ես կպատմեմ յետոյ, կպատմեմ ընդարձակ և երկար: Մեծ անուն թողած մեծ մարդու պատմութիւնը երկար պէտք է լինի:

Խոկ այժմ ես կպատմեմ անանուն կրտսերներից և ամենաարիասարդներից մէկի մասին, որի գեռ համարեա մանկական գլխի վերեր կուսական ձեռքով տնկուած է այս փոքրիկ խաչը:

Հրաշալի Մայիս ամիսն էր, երբ նրանք այստեղ եկան: Չուշանները փթթել էին չտեսնուած առատութեամբ: Ոչ հեռու՝ թփերի մէջ կապտագոյն հոսանքի գլխին երգում էր սոխակը, նորաբոյս խոտերն ու ձարախոտները կանաչով էին ծածկել ամբողջ մարդագետինը, շուշաններն ու վայրի վարդերը զարդարել նրան: Ենոքիւ գարնան՝ օդը պայծառ էր, տաք և անուշաբոյր: Նրանց այստեղ գալովը դաշտը աղմկալի, բազմամարդ և ուրախ գարձաւ: Այս, այս, խոկապէս ուրախ:

Նրանք սորուկներ չէին, որոնց բռնի ուժով թոկերով գէպի վտանգաւոր պատերազմն են քաշ տալիս: Կամաւորներ էին նրանք, որոնք յօժար կամքով սուրբ սեղանին բերին իրենց զոհը: Գաղափարական յուսով տոգորուած մաքով, սիրոյ կրակը սրտերին՝ նրանք բարձր էին պահում իրենց սրտերն ու գլուխները: Համարձակ էին նրանք, ուժեղ, խիզախ ու միւնոյն ժամանակ կհաւատատաս արդեօք, արագաթեւ Քամի, նրանք և երջանիկ էին: Դու պէտք է հաւատաս, որովհետեւ դու գիտես, երկիր կոչուած Աստղի վրայ մարդկային հոգիներն ու մարդկային երջանկութիւնը շատ բազմազան են, և որ մարդկային հոգին թիթեռնիկի նման սովորաբար իջնում է ընտրեալ ծաղկի վրայ, երջանկութեան այն տեսակի, որին աւելի նման է ինքը: Նրանց հոգիները իրեն է քաշում այն երջանկութիւնը, որ բարձր սարերի վրայ է ծաղկում, որ ծիրանագոյն բաժակ և վշեայ պսակ ունի:

Ոմանք այստեղ ոտով եկան, ոմանք էլ ձիով: Երկիրը գոզում էր թամբած ձիերի արոփիւնից, օդը ամեն անգամ կայծեր էր արձակում նրանց մերկացրած սրերից, երբ առաջնորդի պողպատէ ձայնը հնչում էր:

— Նարքեր կազմի՞ր:

Առաջնորդի ընտրութեամբ հեծելազօրի գլուխն էր ան-

ցել վայելչակազմ Երիտասարդը ու հրացայտ աչքերով։ Կազմուածքով նու երիտասարդ Հեղակլէս էր, գէմքով՝ Սկիպիոն Հռովմայեցի։ Այսաեղից հեռու չէր նրա հայրենի տունը, որ ամբողջապէս վերելից ներքեւ պատաժ էր բաղեղներով, և ամեն կողմէց շրջափակուած՝ գարսւոր ծառերով և ընդարձակ պլազաւէտ գաշտերով։ Նա դուրս եկաւ կանաչ բաղեղների միջից, եկաւ այսաեղ Երեխայի հնագանդութեամբ, և սիրահարուածի պէս տռաջ էր թուշում իր վայելչակազմ, տաք, արաբական նժոյդի վրայ ամեն անգամ, երբ հնչում էր տռաջնորդի կանչող ձայնը։

— Եադմի՛ն։

Գեշերուայ պէս ու մազերի վրայ կարմըն էր տալիս նրա քառանկիւնի գլխարկը, ձեռքը զրած էր սրի Երախակալին, իսկ զօրեղ ուսերի յետերից լուսում էր հէնց նոյն վաղեմի, անեւըեոյթ թերերի ազմուկը . . .

Բայց իմ այս փոքրիկը, իմ այս փոքրիկը (նորան բանակում փոքրիկ ծուրլովակից էին անուանում) . . . Նա ոչ այնքան զօրեղ էր, ոչ այնքան գեղեցիկ, և ոչ նոյն իսկ այնքան հարուստ, որ կարողանար գալ թանկադին, շքեղ զարդարած նժոյդի վրայ։ Երեկ թէ հէնց այն պատճառով էլ նա իմ սիրելին դարձաւ, որ թոյլ էր, նուազ, զէմքը քնքոյշ վարդագոյն, աչքերը կոյսի աչքերի պէս շայսդ, անհամարձակ յուտակ ու կապուատակ որպէս մանուշակ, որ Երեմին փթթում է այսաղ իմ շուրջը։ Կարճ՝ նա նման էր ծալեալ աղջկայ կամ գեռաւտի պատանու, և յիրաւի՛ նա նոր էր լրացրել 20 տարին։

### III.

Նորա կուսական, հեզ աչքերի մէջ Երբեմն խորը մաքեր էին արտացոլում, որ նորա Երիտասարդութեանը չէր համապատասխանում։ Իսկ վարդագոյն քնքոյշ զէմքին այնպիսի վառշաղքեր էին փալփլում, կարծես՝ նորա մանկական նուրբ կազմուածքի ներսը մի բան բռնկուելիս, վառուելիս լինէր։

Առենք ես սիրեցի նորան զեռ ևս նախքան նորա այսաղ գալը։ Նորա մասին իրար հետ խօսակցում էին այս գանգուր խոտերը, որոնք իրար փարուելով ինչ որ բաներ էին շշնջում իրար։ Նրանք նորա մասին շատ փառաւոր և լաւ բաներ էին պատմում։ Ես հիացմամբ էի լսում նրանց խաղաղ երեկոների մըմունջի ժամանակ։

Նա այս երկրում չէր ծնուել, այլ ինչ որ հեռու երկրում։ Այսաղ նրան ըերազը այն լեռնային հեղեղն էր, որ անցնում

էր մեր երկրով և գիրքի տէր անձնաւորութեանց նետում էր հասարակ մարդկանց ձեռքը և նոյն իսկ նրանց ուների տակ ձգում: Խնչու նա յատկապէս մեր երկերն ընտրեց, այդ եւ չգիտեմ, այդ կարեւոր էլ չէ ամեննեն: Խորհրդաւոր քօղով քողարկուած բախտը իր ձեռքին ունի կապարճը՝ լի հաղար ու մի պատահարներով, որոնցով դէս ու դէն է շպրտում մարդկանց: Նա գնդակների պէս խաղում է նրանց հետ երկը ամրոջ տարածութեան վրայ և պատահարների լայնածաւալ շրջանում:

Նա եկաւ մեղ մօտիկ մի տեղ, այնտեղ իւր համար փոքրիկ սուն հիւսեց, որ ամեն օր լիքն էր մանկական ձայների ծրլվրցով: Նա մենակ չեկաւ այստեղ, նրա հետ էր նրա փոքրիկ քոյրը, մի աղջիկ, որ չափազանց, զարմանալու աստիճան նման էր նրան: Միենոյն փոքր հասակն ու քնքոյշ կազմուածքն ունէր, միենոյն գիմադքերը, դէմքի միենոյն գոյնն ու արտայայտութիւնը: Որքան սիրում էին նոքա միմեանց: Ըստ երեսութին նոցա բոլոր մերձաւորները մեռել էին, և նրանք ամբողջ աշխարհում մենակ էին: Միայնութիւնը սրբութիւնը և հեռու էին լորիներով հովանաւորուած հայրենի տունը ամրակնդել էին այն կապը, որ գեռ օրորոցումն էր կապուած: Բացի այդ, հաւանօրէն այդ կապն ամրակնդել էին նաև միենոյն առանձիքը, որոնք կառավարում են մարդկանց հակումները, ցանկութիւններն ու ձգտումները: Նրանք աշխատում էին միասին. եղբայրը սովորեցնում էր քրոջը, քոյրն օգնում էր եղբօրը. և միշտ երկուսով միասին էին թէ տանը, թէ աւանի փողոցներում, թէ անտառի կածաններում և թէ դաշտում: Աղջիկը տղային Մարըս էր կոչում, իսկ վերջինս նրան՝ Անելիա: Նրանք շատ լաւ էին գտում իրենց, երբ միասին էին և երկուսի հտմար էլ միանգ ամայն պարզ էր, թէ որքան երջանիկ են իրենք աշխարհում:

Շուտով սակայն անուանի փողոցներում, անտառի կածաններում և գաշտում նրանք շրջել սկսեցին ոչ թէ երկուսով, այլ մի երրորդ անձնաւորութեան հետ: Նրանց ընկերակցում էր յաճախ կանաչ բաղեցների միջից երած յիշեալ բարձրահասակ, ուժեղ, ճարպիկ երիտասարդը, հովլմայեցու պրօֆիլով, որը յետոյ այս գաշտավայրում հեծելազօրի առաջնորդ հանգիստացաւ: Արտաքինով սա ամեննեին նման չէր նրանց: Թւում էր կարծես ուրիշ ցեղից լինէր աւելի կարմիր տըեամբ, որին քնութեան մուքն աւելի մեծ և զօրեղ հարուածներով էր կռել ու կոփել: Զնայած այդ բանին նրանց յարաքերութիւններն աւելի ջերմ ու մտերմական էին գառնում: Բարեկամութիւն էր այդ, թէ սէր, թէ երկու զգացումն էլ միասին: Բարեկամութիւն էր այդ, թէ սէր,

թէ վերջացաւ նըանսի, որ մի գեղեցիկ օր աղջիկը կարճատե  
բայց յուսահատ լացով հեկեկաց, և այդ շնորհիւ նոր քնկերոջ:

Պատահեց այդ հետեւ կերպով. աւանի մօտիկ ան-  
տառում, մի վայր ընկած ծառի վրայ, քոյր ու եղբայր միա-  
սին նոտած, գլուխները միմնանց թեքած՝ զիտում էին մի  
միեւբաձե կանաչ, որի վրայ սոզում էր մանրիկ բղէզը, երբ  
յանկարծ շտապ քայլերով մօտեցաւ նըանց և կանդ առաւ յի-  
շեալ պատանին: Նա վնասում էր նըանց և գտաւ. նա վա-  
զուց գիտէր, թէ որտեղ և երբ հեշտ է նըանց գտնելը. նա այ-  
սօր տարօրինակ էր, սալորականի պէս չէր, նրա աչքերը վառ-  
ւում էին արտասավոր փայլով, ու բեկերի տակից շրթունք-  
ները կարծես բոցավառուելիս լինէին. զգացմունքների մի փո-  
թորիկ էր արտայայտում նրա համարձակ դէմքը. նա կանգ-  
նեց նըանց առաջ առանց բարեելու. հանեց գլսարկը, ձեռքը  
տարաւ ու մազերի վրայով և այդ բազուկը, մեծ ու զօրեղ,  
թեթև գողում էր . . . նըանք խոկոյն հասկացան նորան . . .

— Օրն արդէն նշանակուած է.

— Այս.

— Ե՞րբ.

— Ֆօտաւորապէս տասն օրից յետայ.

— Ո՞րտեղ.

— Դէտկովիչում.

— Ո՞ւ մասում.

— Աքայական ջրանցքի յետել, Հօրեցիան անտառներում:  
Ապա հնչեց աղջկայ ձայնը.

— Արդէն.

Պատանին հարցրեց եղբօրը.

— Դու քո վճիռը չե՞ս փոխել.

— Դու կարծում ես իմ հոգին փոխուել է, ի՞նձ է.

— Միասի՞ն ուրեմն.

— Տասն օրից յետոյ խնդրեմ ինձ մօտ, ապա միասին կեր-

թանք այնաեղ, ուր բոլորը կլինին . . .

Նըանք լուեցին. նըանց խօսակցութիւնը կտրեց աղջկայ  
կրծքից գուրս թռած հեկեկանքը: Դէմքը ձեռներով ծածկած,  
Անելկան հեկեկում էր, հեկեկում յուսահատ:

Անելկան գիտէր, որ այդ կատարուելու է, բայց, հէնց  
որ ժամանակը հատաւ, նա դառնապէս լաց ելաւ և նորա  
քնքոյց մարմինն ամքողջովին գալարւում, գողում էր: Խար-  
տեալ մազերը փոռուել էին ուսերին, և մատների արանքով  
գորշագոյն զգեստի վրայ հոռում էր արցունքի կայլակը: Բայց

այդ երկար չտեղց. նա ամբողջ ուժերը լարեց հեկեկանքը կըտրեիրւ՝ և լուեց: Նա ոտքի ելաւ և փարուեց եղբօր վզին: Ամուս ուժգին սեղմուելով եղբօր կըծըլն՝ նա կըկնում էր.

— Գնա՛, Մարըս, գնա՛.

Արցունքից թաց երեսին ժայիալ սառեց, շրթունքները ցաւից ծամածուեցան, կարմրութիւնը գէմքից թռաւ: Նա ամեն ճիշ գործ էր զնում զսպելու իրեն և իր ողորմելի հայեցքը եղբօր աչքերին ուղղելով, որ նոյնպէս արխարար կըռում էին արցունքների գէմ, կըկնում էր շարունակ.

— Գնա՛, Մարըս, գնա՛, այդպէս է պէտք:

Նոյն օրը, երեկոյեան, փոքրիկ պարտիզում, ուր աճում էին մի քանի խնձորենիներ և ծաղկում յասմիկների մի քանի թփեր, մեզմ շըշնչում էր մարդկային երկու ծայն: Կոյսի ձայնը խնդրում էր.

— Նա հոգւով առողդ է, իսկ մարմնով թոյլ. Նա սովոր չէ ֆիզիկական վարժութիւնների . . . Մանկութիւնից ի վեր զբաղուած է գրեթով, գիտութեամբ, մտաւոր աշխատանքով . . . Անվեհեր է նա հոգւով, սակայն ուր է ոյժը. սիրում է նա, սիրում ուժգին, միայն ես գիտեմ, թէ ինչպէս, բայց արդեօք կարող է նա այդ տանել: Նրա հայրենիքն այստեղ չէ, և այնտեղ էլ ոչ մի մօտիկ մարդ ունենալու չէ: Դուք երթէք վախե զգացում չէք ունեցել. այդ պարզ երեւում է, գրա համար էլ չէք ըմբռնում այն ներքին յուղումը . . . որ սառցի պէս պատել է հոգիս, սուր գանակի պէս ցցուել սիրու . . . աղաչում եմ . . . աշխատեցէք նրան մենակ չթողնել:

Երկտասարդը խօսք տուեց:

Ուր նա չունի մերձաւորներ՝ ես կլինեմ նրա մերձաւորը՝ ես նրա մտերիմը, եղբայրը կլինեմ և պէտք եղած գէպքում՝ նաև պաշտպանը: Եւ ինչպէս հեռանում ենք միասին, միասին էլ կլինենք կուրծք կուծք, սիրտ սրտի տուած . . . Միասին էլ յետ կդառնանք . . . և կամ . . .

Լայն կըծըլց գուըս թռաւ և յասմիկների ըուրմունքի հետ տարածուեց մի ուժգին հառաջանք. և յասմիկն էր միայն հանգիստեն՝ թէ ինչպէս հոռվմայեցու պրօֆիլով տղամարդու մի գէմք կուացաւ, և նորա բոցավառ շըթունքները տեսական ջերմ համբոյըներով ծածկեցին կոյսի գողգոջ փոքրիկ ձեռները: Այդ առաջին համբոյըներն էին . . . բայց մի՞թէ և վերջինը: Ապա նրանց հայեցքները թաղուեցին իրար մէջ և միմեանց աստղերը լոյսի տակ շատ բան պատմեցին: Գուցէ նրանց շըթունքները զօրէին էլ աւելի բան պատմել, սակայն . . . այդ ճգնաժամին . . . անկարող էին: Ու արդեօք հնարաւորութիւն կու-

նենա՞ն երը և իցէ ասելու: Մարդկանց թիկունքին կանգնած է խոզհղաւոր ծածկոցով քողարկուած բախտը և ձեռքին բռնել է հազար և մի պատահականութիւններով լի կապարճը . . .

Թոյլ տուր մի վոքը հանգիստ առնեմ, արագալաց Քամի. կան մարդկային այնպիսի վիճակներ, որոնց մասին երկար, առանց դադարի պատմել չեն կարող նոյն խել ինձպէս զօրեղ կաղնիները: Դող է անցնում ամբողջ ոստերովու, և տերեւներին վրայ ստուն կաթիլներ են առաջանում:

Սառը ցողն իջաւ անտառի վրայ և խոշոր կաթիլներով խիս ծածկեց զօրեղ կաղնութ թաւուտ միրուքը: Գանգաղ հոսում էին նրանք թխտենու գանգուրների վրայով, արծաթագոյն փոշու նման փայլիլում էին խոտերի, թփերի, մանիշակագոյն զանգակիկների վրայ, փայլիլում էին վայրի վարդենու թեթիկների վրայ, որի, դեռ քիչ առաջ ոստակի (բնակ) ոլէս փայլող սրտեկները հանգչում մարտում էին:

Երկինքն էլ էր հանգչում, մարտում, որի թափանցեկ սաղարթի միջով լուսաւորուող հրդեհի արթւնատ բացը փախուել էր վերջալոյսի ոսկեգոյն, գունատ լոյսի: Երկնքի այդ գունատ ոսկեգոյն լճից արձակուեցան տխուր ճառագայթներ-կիշերուայ առաջին սուրհանդակները, և տագնապալից մելամաղձոտ տխուրութիւնը պատեց անտառը . . . Սակայն գիշերը գեռ չէր իջել, և երկնքի վրայ աստղերը չէին երևում. միայն տեղ-տեղ լողում էին վերջալոյսի շողերով յոտակացած ամպերը, որ աւելի շուտ նման էին ոսկէ փետուրների կամ նուրբ կարմրի:

Երկնային ոսկեփայլ փետրեկների տակ, օրուայ հանգչող լոյսի մէջ, իր թաւուտ կատարը շարժեց բարձրահասակ վայելչակազմ եղենին: Դողացին և լայն բացուեցան նրա վիշտ ոստերը, և մարդագետնի վրայ՝ օդի մէջ, տարածուեց անտառի ծառերի ամենաբարձրի հպարտ և մտածկոտ խշողը:

## IV

Ես այս անտառի ամենաբարձր ծառն եմ. իմ հայեացքն ամենից հեռուն է տարածւում, ես բոլորից շատ եմ տեսնում:

Ես կուիւներ եմ տեսել, որ տեղի են ունեցել երբեմն հեռու, երբեմն մօտիկ, երբեմն այնչափ հեռու, որ նրանց ձայնը հասել է մեզ իբրև երկնակամարի ծայրում որոտացող ամպի խուլ դզրդոց, կամ իբրև անտառի խշոց, երբ փոթորկում, խոտվում է նըանց ոլացող Քաջքաքամին:

Այստեղ՝ այս մարդագետնի վրայ, այն ժամանակ տերում էր գարնանային ջերմ և անուշ սրոյը խաղաղութիւնը,

թիթեռնիկները կալչում էին ծաղիկներին, իսկ թեատրո միշտամունքները, արևել ճառագայթների շողքեցում, թուվում էին մամուռների և խոտերի վրայ:

Սոխակն էլ իր երգն էր սկսել արդէն թփերի վրայ, թոշնիկները, որոնց խաղաղութեւնն էր հրապուրել այստեղ, աղմուկից սարսափած մեր ճիւղերի վրայ էին տպատարան գտնում: Իսկ այնտեղ գաղանային կարաղութեամբ, սարսափելի ջղածգութեւններով, մարդկային դիակներ էին թաւալւում և, կռուի աղմուկի մէջ, հրացանների որոտի տակ, ահագին կայծակների հեղեղի մէջ, նրանց արիւնն էր թափւում խոտի, մամուռի, ծաղիկների վրայ և ծծւում թնդիւնից դոփիւնից հեծող երկը մէջ ...

Սակայն, արագաթե՛ Քամի, ես չեմ կարող քեզ պատմել այո՞ երբեմն տեսածո և լսածո գործերի մասին. ես իմ խըշշոցով յաճախ եմ պատմում երկընն նրա վշտերի անմեկնելի գաղանիքների, զուր յոյսերի, միայնակ շերիմների մասին, կամ փոթորկալից գեշերները խօսում եմ ամպերի հետ մեծ գործերի մասին:

Բայց ես մարդկային արիւնոտ կախւներն երգել անզօթ եմ. ես, անտառային խաղաղութեան բնակչունիս, դրա համար չէ որ ծնուել եմ. ես ապահով ապաստարան եմ թրուշունների ըների համար, ես մեղմիկ ստուեր եմ տարածում այն ամենի վրայ, ինչ որ տօթից տոքորւում ու կորչում է:

Ես ուրախութեւնիցո գողում էի և ամեն անգամ, երբ նրանք կենդանին և յաղթող էին վերադառնում այստեղ, ես իմ խըշշոցի միջոցով գոհաբանական ովաննա էի վերառաքում երկնիքն:

Եատ անգամ են նրանք յաղթող վերադարձել. ու թէե նրանց այրուած դէմքերը յաղթութեան հզարատութեւն էին արտացոլում, այնու ամենայնիւ առաջնորդի ձայնը լոելուն պէս՝ հնազանդութեամբ շարքեր էին կազմում և լուռ սպասում նորա հրամաններին:

Նա իշխում էր նրանց սրտերի վրայ. նա գիտէր ոգևորել նրանց: Նա այդ շարքերի առաջ լաց էր անում իր ու գլուխը և շնորհակալութեւն յայտնում նրանց, որ երեխայի որէս հնազանդ և առիւծի պէս անվեհեր՝ չցրուեցան գերազանցող ոյժի առաջ և ամօթով չծածկեցին իրենց ուսերին վերցրած խաչը: Բայց այդ շնորհակալութեւնը յայտնելիս էլ, նրա ձայնն իբրև մարտի կոչ էր հնչում, և չունէր այդ ձայնը ոչ քնքշութեւն և ոչ փաղաքշանք. այլ արտայայտում էր վճռականութեւն և երկաթի կամք: Այդ հեղ և խիստ շնորհակալութեւնից նրանց

արեից այրուած, վառօգից խանձուած, վաշով ծածկուած դէմքերի վրայ չքնաղ ուստիութիւն էր ըսնկում:

Եւ ապա... պատմուածքներ, աղմկալի խօսակցութիւն, անուշաբոյր ծխով խարոյկներ, ձիերի ուստի խրխնջոց, մամուռների և խօսերի վրայ խաղաղ, հանգիստ, ասպերի լոյսի տակ մեղմ երգեր և խմբական երգի խուլ ծայներ, որոնք բոցավառ հնազանգութեամբ բարձրանում էին դէպի նա, որ առաջերից վեր է գանւում:

Մեր փաքսիկ Տարլովտկին էր միայն, որ համորեա թէ չէր մասնկացում ընդհանուր խօսակցութիւններին և հանացներին: Նա անհանգիստ և վրգովուած մտածում էր անդադար, հարծես թէ նրա հոգին ճօմուելիս լինէր կտոհածներով, հարցերով, գաղանիքներով լի անդունդի վրայ:

Աստղերը պապղալուն պէս նա պաւեկում էր այդ թխանուտակը և երբ ըոլոքը արգէն քուն մտած էին լինում, նա զեռն երկար ժամանակ արթուն էր մնում:

Սկզբում մեղանից և ոչ մի ծառ չէր ըմբռնում նրա յուզմունքն ու վիշտը՝ առաջնոր՝ ես հատկացայ նրան: Նա զբա համար ծնուած չէր. ինչպէս և ես... ես յաճախ եմ խօսում երկնքի հետ մեծ գործերի՝ անմահ գործերի մասին. իսկ մարդկային արիւնալի կուիւները փառաբանելու համար ես ստեղծուած չեմ... Նա ես, որ բուռն սիրով սիրում էր ընութեան հանճարն ու մարդկային վեհ միտքը, ստեղծուած չէր այս արիւնալի կուիւների համար. նա ինչ որ այլ բանի համար էր աշխարհ եկած . . . . .

Ես մօտիկից էի ճանաչում նրան, ես լաւ գիտէի նրա մաքերն ու հակումները, շնչաց թխանին, որի երկար, սաղարթախիտ գանգուըները մինչև գետին կախ ընկած աեղ-տեղ արծաթի պէս փայլվելում էին երեկոյեան ցօղից, իսկ սպիտակ թափանցիկ քաթանի զգեստի միջով արտացոլում էին երկար գանգուըները:

Նա ստեղծուած էր այն մտքերի համար, որ պատմում էր իր ընկերոջ այն միջոցին, երբ ըոլոքը քուն մտած՝ իսկ ինքն արթուն պառկած էր լինում իմ ոսների տակ՝ փարթամ. կանանչի վրայ:

Քուն չունէր նաև նրա ընկերը, նրա աչքերից քունը հաւածուած էր այն հոկայական առեղծուածի մտածմաւնքով, որի մէջ, որպէս արնոտ ուրդոստայնում, խճճուել էին թէ այս երկերը և թէ՝ նրա լաւագոյն զաւակները. խանգարում էր նրա քունը գուցէ նաև հեռու՝ հաւանօքէն կարօտաղ գուցէ և լա-

ցող, Անէլկայի մտաժմունքը; “Նո Եկաւ Անէլկայի եղբօր մօտ և, Երկար ժամանակ, երեսները իրար գարձրած, պառկած էին նրանք իմ ոտների տակ: Գիշերային լոռութեան մէջ նրանք հանդարտ խօսում էին, այնպէս հանդարտ, ինչպէս իմ գանդուրներն են արտասում, երբ մայիսեան գիշերային տնձը եթի կաթիլները թեթև խշոցավ խոտի վրայ են գլորում նրանց վրայից:

Կուռ էր բանակի մի ծայրում երբեմն ձին էր խրինճում, միւսում՝ մերթ ընդ մերթ քնած մարդու կրծքից խուլ ձայն, կամ ծանը հառաչանք էր գուրս թռչում: Ա. Երջին կուռում վիրաւորուածներից մէկը հեծում էր կաղնու տակ՝ ճիւղերից հիւսուած վրանում: Խսկ մարդագետինը պատող ծառերի յետել, աստղերի թոյլ լոյսով լուսաւորուած տարածութեան վրայ, երեսում էին զինուած և անչարժ կանդնած պահակների կերպարանքները:

Ընկերները զրուցում էին, իրանց աստղերին նայելով, այն հետու գալիք օրերի մասին, որնց գալը գեռ հաստատ չէր և որոնք եթէ գան՝ կողովեն երկերը որբութեան և հանդսառութեան ջրերով . . .

Կարօտով և յափշտակութեամբ, բուռն ոգեռութեամբ էին խօսում նրանք աշխարհի ապագայի մասին, որը, հարիւրաւոր տարիների կուռներից, չարութիւններից և տանջանքներից յետոյ, փոխուելու է համաձայնութեան, ոիրոյ և ուրախութեան դրախտի:

— Թէ՛ կուռի առարկան անչափ թանգ և սուրբ է, բայց այս կուռում թափսւած մարդկային արիւնը իրեն թոյն է հոսում երակների մէջ և հասցրած վէրքերը հասցնողներին վէրք պատճառում: Զայրոյթը, ցաւն ու մահը այն ուրուներն են, որոնք ոնտում են մարդկային յուտոյ, երջանկութեան և ուրախութեան դիակներով: Մարդկային չար ցեղ, որ ինքն իր գէմ է սրում իր ճիրանները, խեղան ցեղ, որ այգչափ քիչ է ապրում, որի զաւակները փոխագարձաբար կարճում են իրար կեանք. Դժբախտ ցեղ, որ ամեն կողմից վտանգուած է, որի զաւակները փոխագարձաբար սպառնում են իրար իրանց մարմնով և մաքով: Ո՞հ, երբ վերջապէս կփոխուի այս ամենը, և կփոխուի արդեօք երբ և իցէ: Խնչո՞ւ ես աւելի ուշ չծնուեցի, երբ աշխարհը փոխուած կլինէր, կամ աւելի վազ, երբ անկարող կլինէր նախատեսել, որ աշխարհը կարող է այլ կերպ լինել . . . եթէ այլ կերպ լինէին մարդիկ:

Թոպէական լոռութիւնից յետոյ նա տիսուր ժայխառվ յիշեց հին բանաստեղծի ոտանաւորը:

Աւանդութիւնն ասում է, որ Պրոմէթեսը նախնական կաւի մէջ, որ մարդկային բնութեան հիմք է ծառայում, ածեց ամեն գաղտնի յատկութիւններից մի մի կաթել, իսկ մարդու ոիրտը համեմեց դայլի աղաճութեամբ և առիւծի կատաղութեամբ։ Ահա թէ ուր է զայրոյթի և վրիժառութեան այն բռնկումների պատճառը, որոնք սոսկալի տանջանքներով դիզում են մարդկանց գլխին։ և ահա թէ ինչն է պատճառը, որ հոյակապ շնորհիւնները վլատակների են փոխում և թշնամու զօրքերը նուաճուած քաղաքների ամրութիւնները գութանով վարում՝ արտի են փոխում։

— Հօրացի՞նոր հարցը կասողի ընկերը, և նոյն բոլէին զօրեղ բազկի ուժգին շարժումով ոտի ելաւ։

— Նուաճուած քաղաքների, կրկնեց միւրը մացականչեց։

— Այժմ այլ կերպ յինել չ' կարող . . . նուաճուած քաղաքների . . . Այժմ կռիւը մի պարտականութիւն է . . .

Մեզմ ձայնը հնչեց ի պատասխան այդ բուռն կոչե, հնչեց մնական և համոզուած ձայնով։

— Այժմ այլ կերպ լինել չ' կարող։ Քանի բռնութիւնը գոյութիւն ունի, այնչափ սուրբը է զայրոյթը ընդդէմ բրունութեան։ Քանի անարդարութիւն է, այնչափ պիտի շարունակուէ կռիւը։ Արեան և մահուան միջով, յուսալց կամ անցոյս, կռիւ պէտք է մղել երկրային գժոխըի դէմ յանուն երկնքի, որը աշխարհ է իջնելու։

Այգակս էին խօսում նքանք յաճախ գիշերային մթութեան մէջ, երբ բանակը քուն էր մտած, իսկ բանակի շուրջը աստղերի թոյլ լոյսով լուսաւորուած տարածութեան վրայ երեսում էին զինուած պահակների ու կերպարանքները։

Վերջապէս հասաւ օրը . . . Անդամ շնորհագիւնը շնորհագիւնը հետզհետէ աւելի էր մեղմանում, վերջապէս . . . կտրուեց։ Նորա փոխարէն խօսեց միրուքաւոր զօրեղ կազնին։

— Վերջապէս հասաւ սարուափելի օրը։ Լուր բերեց հեռաւոր գիշերային խուզարկու պահակը . . .

Բացի բանակի շուրջն եղած մօտիկ պահականներից նրանք ունէին նաև հեռաւոր գիշերաշրջիկ պահակախմբեր, որոնք լուրեր էին հասցնում այստեղ, տեղեկութիւններ, և նախազգուշացնում։ Նրանց այստեղ լուրեր բերելը յիշեցնում էր առասպելական թագաւորակնին, ու, վամպիրներով լի տառասկոտ թփերի և ահաւելի զրականներով վնասացող ճահճային եղէգնուածների միջով, առաջ է սլանում դէպի կախարգուած թագուհու դղեակը։ Այդ սուրհանդակները երբեմն կորսւստի

էին մատնւում վամպիրների գրկում կամ դրակոնի երախում մ,  
Երեմն էլ համնում էին իրենց նպատակին.

Հեռուից լսելի էր արդէն անտառի միջով արշաւող ձիու  
դոփիւնը.

— Պարօն ի՞նչ է,

— Յուսի կամ անյոյս.

Մարդագետնում՝ Երեսը քրտինքով ծածկուած ուժու-  
պառ ձիու վրայ Երեաց Երիտասարդ ձիւաւորը։ Միջօրէի տօթը  
տուզորում էր նրան։ Մի քանի հոգի միաձայն բացականչեցին.

— Հա՛, Կալի՛ստն է, Կալի՛ստը։ Հը, ի՞նչ կայ։

Բայց հեծեալը ողջոյնի, պատասխանի ժամանակ չուներ.  
Նա անմիջապէս ցած թռաւ ձիուց։

— Ո՞րեղ է հրամանատարը, շուտ արէք, տարէք ինձ  
նրա մօտ։ Հրամանատարի ազիւտանոն ու ռազմական պոստի  
սուբհանդակը միասին մտան առաջնորդի վրանը։

Բանակում լուսութիւն տիրեց։ Այդպիսի արտաքուստ  
խաղաղ, իսկ ներքուստ գղրդացող լուսութեամբ համակաւած է  
լինում բնութիւնը փոթորկի նախավայրկեանին, որը վրայ է  
հասնում մըրբիկներով և շանթի հարուածներով։

Նուտով առաջնորդի վրանը մտան նրա հրամանով հեծե-  
լազօրի հրամանատարն ու Երկու ուրիշ ընկերներ, որոնք քեզ  
թէ շատ փոքճուած էին ռազմական գործում։ Սկսուեցաւ խոր-  
հըրդակցութիւնը։

Երկար սպասեցին։ Վերջապէս Թօմաւալդ Տրաուգուտը  
գուրս եկաւ վրանից և բոլորին յայտնեց ստացուած լուրերի  
մասին։

Այդ լուրերի մէջ լսւում էր մօտիկ կռուի որսաք . . . Մա-  
հուան հոտ փչեց։

Մատենաւմ է ահագին զօրքը, չորս կողմից շրջապատում  
անտառը։ Նրա հետեւակ և ձիաւոր շարքերը ազմկալից գետերի  
նման սղողում են անտառը։ Մառերի անտառի միջով շարժ-  
ում է տէգերի, հրացանների, սուբնների անտառը։ Մի Երկու  
ժամկց յետոյ նրանք այստեղ կլինին։ Սուբհանդակն այդ լուրը  
քերեց Երկար, դժուարին ճանապարհներով, բայց այնու ամե-  
նայնիւ էլի ժամանակին բերեց։ Հարիւր հրացան մէկ հրացանի՝  
հարիւր նիզակ մէկ նիզակի գէմ։ Այդպէս է հերեաթների մէջ,  
ոակայն նոյնը պատահում է և իրականութեան մէջ։ Երկիւդ  
կը կըե՞ն արդեօք նրանք այդ իրականութենից։ Սակայն ովքեր  
են նրանք. չէ որ նրանք թորի ոյժով կռուի արեան գաշտը  
քաշ առւած սարուկներ չեն. նրանք կամաւորներ են, որոնք,  
ուրախութեամբ են մատուցանում իրենց զոհը բարձր սեղանին։

Նրանցից անբաժան է սխրագործութեան և զոհողութեան ողին, անբաժան է և այն սիրոյ ոգին որ նրանց այստեղ մղեց: Մեռնողները իրենք ոերմանող կլինին, որոնք իրենց իրակ հատիկ կնետեն հողի մէջ ապագայ հունձի համար: Ո՛չ մի բան ի զուր չի կորչում: այսօրուայ պատնէշները վաղուայ յաղթողների համար կաճեն՝ զէնք և պաշտպան կդառնան: Նրանք կլարեն իրենց բոլոր ոյժերը. իրենց անվեհերութեան, ոխրագործութեան տոկունութեան ամբողջ եռանգը, որպէս զի յողթեն թշնամիներին: Նրանց մարտական կոչք կլինի՝ յանուն հայրենիքի և Աստուծոյ: այդ հոգով նրանք կնետուին կռուի մէջ կամ յաղթութեւն կամ մահ:

Այդպէս խօսեց առաջնորդը. Նրա հնչեղ, կարճ խօսքերը ծայրէ և ծայր լցրին ամբողջ բանակը. այդ խօսքերը հետզհետէ աւելի և աւելի զօրեղանում, աւելի և աւելի կրակ ստանում և շանթերի նման թափւում էին շցնապատողների գլխին. մինչեւ որ վերջապէս նրանք մարգագէտնի ծաղեկների նման աէկոծուեցան, և հարթերաւոր լայնացած կրծքերից դուրս թռաւ ցնծութեան մի զօրեղ ազաղակ:

Այսուհետեւ դպրդաց, եռաց ամեն ինչ. ձիերի թամրելը, զէնքերի մաքրելը, զօրախմբերի կոչք, շառքերի կազմելը, բարձրածայն հրամաններն ու մեզմ կարգադրութիւնները... Կեանքն եռում էր, հնչում էին ձայներ, լուռում էին սմբակների գուղիւն, զէնքերը փայլվում էին տօթ և արևի լոյսով լի օղի մէջ:

Ապագական պօստի սուրհանդակը պէտք է վերագառնար նոյն երկար և գժուացին ճանապարհով: Սակայն նախ քան ճանապարհ ընկնելը՝ նա կանգնացրեց իր ձին արդէն կազմուած հետեակ շարքերից մէկի առաջ և, «Քրոջեց», կարճ խօսքն արտասանելով, յանձնեց ամենից մանկահասակին մի փոքրեկ եր, այնչափ փոքր, որ դժուարութեամբ կարելի կլինէր նկատել:

Դա մի փոքրեկ թղթի կտոր էր, ամբողջապէս գրուած և այնպէս փոքր ծալուած, որ հարկաւոր գէպքում հեշտութեամբ կարելի լինէր կուլ տալ: Այն ժամանակ դրաից այդպիսի՝ նամակներ էին ուղարկւում բանակը:

Հեծելագնգի հրամանատարը արաբական գեղեցիկ նժոյգը տակին անցաւ Տարլովսկու մօտով և գլխով նշան անելով հարցըեց.

— Պաննա Անէկայից է,

Նրանք փոխագարձաբար իրար նայեցին և երկուսի երեսին էլ ժպիտը խաղաց: Դա մի ծաղեկ էր հեռուեց կոյսի ձեռքով

Նետուած այդ բաց շիրեմների վրայ: Ի՞նչ էր գրել նա: այդ բոպէին եղբայրը չկմացաւ: Բարձրածայն հրամանը հնչեց, և նա շապով թագընեց թղթիկը իր կրծքի վրայ: Կիմանայ արգեօք երբ և իցէ նա այդ թղթի բովանդակութիւնը:

Ապա նրանք նախկին կարդով, խորը լռութեամբ շարժուեցան այգտեղից: Դատարկացած մարդագետնի վրայ մնացին միայն կոխկրառուած խոտը, մեռնող ծաղիկներն ու գատարկ վրանները: Իմ ոտների տակ գտնուած վիրաւորների վրանն էլ նրանց մեկնելու այդ ժամին նոյնպէս դատարկ էր, ինչպէս և միւսները. սակայն չուտով նա նորից պէտք է լցուէր:

Մըագիրն ըստ երեսութիւն վարպետօրէն և խիստ ճարպիկ ձեռվ էր կազմուած. պաշտպանութիւնը տեղի պիտի ունենար յարձակման հետ միաժամանակ: Դարսն մտածները թագ էին կացել աչքի համար աննկատելի անտառի խիտ մասում. իսկ աւելի բաց տեղերում ամեն մի ծառի յետել թագ էր կացած հրացանի խողովակ. մամուռի, ձարխոտի ամեն մի ծածկոցի տակ, ամեն ոտուերախիտ ճիւղերի մէջ թագ էին կացած մերկացրած որեր:

Տարօրինակ տեսք ունէր այդ ամենը. ասում եմ քեզ, արագասլաց քամի, դա մի տարօրինակ տեսարան էր. մռայլ լուս սպասողութեան մէջ քարացոծ դէմքեր էին դրանք, ծաղիկներով զարդարուած անտառի կանաչի՝ ոսկիների մայիսեան ընծիւղների մէջ. այն ոսկիների, որոնք տուշող տօթի լռութեամբ վեր էին բարձրացրել իրենց պայծառ երկճիւղ շիւղերը:

Օգի մէջ չէր լուսում թռչունների ծլվլոցը. նրանք փախել էին երկիւղեց, և միայն մի քանի հարիւր մորդկային կրծքերի քուռն և անհանդիստ շնչառութիւնն էր զգացում:

Վերջապէս անտառի խորքից մօտենալ ոկտեց հետզետէ աւելի և աւելի մեծացող աղմուկը . . . նա՝ այդ աղմուկը, մեծանում, մօտենում էր, զօրեղանում էր հետզետէ աւելի և աւելի . . . թւում էր թէ օգի միջով թւշելիս, կամ անտառի միջով՝ գետնով սողոսկելիս լինէր մի ինչ որ սարսափելի բան . . .

Բայց գեռ ևո ոչինչ չէր նկատեռում . . .

— Ուշադրութիւն, զէնքը դատրաստի՛ր.

Այս մօտեկ, հէնց քամակիս արձակուած հրամանին հետեւց հեռուելց մի ուրիշ կտրուկ և հրամայողական ձայն:

Եւ արդէն նկատելի դարձաւ . . .

Գորշագոյն ահագին մասսան գժուարութեամբ, դանդաղ կերպով շարժւում էր խիտ ծառերի միջով, մացառի ճկուն ու տերով ծածկուած ու ոլորուն բոյսերի ցանցով պատած գետնի վրայով, նա գժուարանում էր առաջ անցնել. նրա քայլերի

աղմուկի մէջ լուսում էր կոռուպատուող ճիւղերի ճարճատիւնն  
ու կացնի հարուածը:

Վերջապէս բոլորովին պարզ տեսանելի դարձաւ... Եւ  
ապա... ծառերի յետեր, թփուտների մէջ բախսեցին, թըն-  
դացին յաճախակի, առանձին, իրար արագութեամբ հետեւող  
հրացանազարեր. վայրկենապէս ցրուել սկսեցին ծառերի և  
թփուտների մէջ կարճ հրային կայծերի ամբողջ մնջեր:

Նարժուող գորշագոյն մասսայի կողմից ի պատասխան  
թնդաց և գղրդաց զօրեղ տեսական հարուածը, և անմիջապէս  
բարձրացան այդաեղից ծիսի թանձը քուլաներ: Բաւտկանին  
տարածութիւն ըռնած հատ ու կտոր հրացանաձկութիւն  
ներին պատասխանում էին խմբական ծանր ռազմական համօ-  
գարկերը: Դա երկու բոլորովին տարբեր որոտների խօսակցու-  
թիւն էր, և այդ հնչիւնների երկերից զողում էին անտառի  
ամենազօրեղ ծառերը:

Արդեօք երկար տեսեց այդ. Այն երկար, ժամերը սահում  
էին իրար յետեւից:

Ամեն անգամ՝ երբ ծիսի եթեր ծովը մի բոպէ երկու մա-  
սի էր բաժանւում, երկու կողմից էլ հեռւում և մօտիկ երե-  
ւում էին մարդկային կերպարանքներ սև ստուերների պէս  
ընկած մամուռների և գանգուը կանաչների վրայ:

Երկու կողմից էլ գիտկներ էին գլորւում. սակայն գիտ  
չէին ըոլոր ընկածները: Այստեղից ոչ հեռու պոստերի մէջ ըն-  
կաւ ու ձգուեց փոքրիկ ծարլովսկին. բայց նա դեռ կենդանի  
էր . . .

Կոռւի հենց սկզբից, մի ծնկան երկնելզ լաստենու յետեւ  
տեղաւորուելով՝ նա լցնում էր հրացանը մոլի, արագութեամբ  
և ռազմական կեանքում ձեռք բերած հմտութեամբ: Կարծեռ  
նա երբէք չէր էլ մտածել այն ժամանակի մատին, երբ աշխար-  
հի վրայ պիտի թագաւորէր յաւիտենական խաղաղութիւնը.  
կարծես նա երբէք բանաստեղծի բերանով չէր նզովել մարդու  
որտի մէջ կաթեցրած առեւծային կատաղութեան շիթը . . .  
Ինչ որ առեւծային կամ վագրային բան էր փայլում նրա  
հրավառ կապոյտ աչքերում և արտացոլում էր նրա բարուած  
ու շաղըութիւնից կնճռուտած դէմքին ու յամառութիւնից դա-  
ժանացած ճակատին:

Յանկարծ ծիսի գորշ քուլաների մնջով, սև մեղուի պէս  
մի բան վրայ հասաւ և մխուեց նրա ձեռքը: Նա վիոլետ ոտի  
կանգնել . . . երերաց և ընկաւ բարձր պուտերի մէջ: Սակայն  
դա կենդանի էր. և մի քանի բոպէից յետոյ երկու զոյդ զօրեղ  
բազուկներ բարձրացրին որան արնեշազախ պուտերի միջից և

տարան իմ ոտների տակ գտնուած վրանը: — Վրանն այլ ես դատարկ չեմ:

Կանաց ոստերից հիւսած բարձր ծածկի տակ, մամուռի և պուտերի փուռւածքի վրայ, պառկած էին մի քանի տասնեակ մարզիկ: Աև մեզուները նրանց մէջ էլ էին խրել իրենց խայթոցները: Երկու հոգի, հոգատար գէմբով, քրատինքի կաթելները ճակատին շարունակ կռանսում էին մէկից միւսնին տնցնելով: Գրանք զօրաբանակի բժիշկներն էին:

Այդ միջոցին տօթը մարդագետնի շուրջը պւելի ևս սաստկանում էր: Հրացանների կրակը հետզհետէ աւելի արադանում, տեական գառնում ու խտանում էր: Մարդկային գորշ մասնան այնքան մօտ էր արդէն, որ հասարակ աշքով կարելի էր որոշել առանձին կերպարանքներ, գէմբեր զգեստ ու զէնքեր: Անշեղ, անյոզգողդ հաշուառութեամբ նա աւելի էր կորացնում իր կիսաշրջանը, հետզհետէ շրջափակում մարդագետինը և առաջ շարժում: Երկու կողմն էլ արդէն իրար են հանգիպել երես առ երես, և կուրծք կրծքի տալով կռուի ըռնուել:

Հետզհետէ այստեղ ամեն ինչ աւելի խտանում, սոսկալի, արիւնոտ և կատաղի դառնում ...

Դժողովը, ասում եմ քեզ, արագասոլաց Քամի, մի զարհորելի դժողով էր եռում այստեղ, այս խաղաղ, անուշաբոյք, ծաղկալից կռուական անտառի գրախտում... Մարդկային դժողով...

Թւում էր՝ այստեղ կատարուածից աւելի սարսափելիքան լինել չէր կարող ամբողջ երկրագնդի վրայ, և սակայն...

Եթէ գու, արագախաղաց Քամի, դիտում ես մարդկանց, երբէք մի ասա, այս ինչ տեղ է նրանց եղերականի սահմանը. սրովհետև ամբողջ աշխարհում ոչ ոք չի կարող գուշակել կամ գտնել այն ամենաբարձր մակերեսոյթը, ուր հանել կարող է նրանց եղերակ մնը, նրանց ոճքագործութիւններն ու անզուգական տանջանքները:

Եւ ահա...

Խիտ լաստենիների և բարդիների յետեկց հէնց այն, տեսնում ես, դիմաց աճող բարդու քամակից, թփուտների միջեց երեաց հեծելածօրի մի գունդ, գլխավերեք երկար սուիններից անտառ կաղմելով, ձիերի մէջքին կպած, սուր ճիչ արձակելով, նրանք ոլանում էին գատարկ գաշտի միջով գէպի այդ վրանը: Տեսնելով մարդկանցով լի վրանը նրանք ուզեց այնտեղ գիմեցին: Այստեղ պառկած էին ուժից ու զէնքից ընկած վերաւորներ, ենրանց գլխին կռացած աշխատում էին բժիշկներ:

Սութններով զինուած արագընթաց ձիերի վրայ կուացած սլանում էին ձիաւորները սուր ճիչ արձակելով, ա.ազմական վառօղից խանձուած դէմքերով, և . . . առիւծի կատաղութիւն էր եռում նրանց երակներում . . .

Յանկարծ յետելից հնչուեցաւ կռուի աղմուկը խլացնող պողպատի ձայնը.

— Վիրուորներին օդնութեան, յառաջ հեծելագունդ:

Մի ակնթարթում իրենց զեկավարի առաջնորդութեամբ հեծելագունդը գաշտ դուրս ելաւ: Դժոխային ծխից ուեցած, յոգնած ձիերի վրայ, հեծեալները ժառերի ու թփուտների յետելից դուրս թռան և մերկացրած սրերը բարձրացրած նրանց դէմ ընթացան . . .

Արևն արգէն արեմուտք էր թեքւում և ծխի մթզով շիւկած պղնձի կէտի կարմիր լոյս էր արձակում: Մուգ կարմիր, մարած ու մռայլ լոյսն ընկել էր արշաւող ձիաւորների վրայ լուսաւորում էր նրանց արեառ դէմքերն ու մերկացրած սրերը: Այդպիսի արևի ճառագայթներով լուսաւորուած՝ նրանք հասան թշնամիներով շրջապատուած վրանը: Ճիւզերից հիւսած բարակ պատը խախտուել էր արգէն սարսափելի նեղուածք էր տիրում, սարսափելի ողը ու կոծ էր հնչում: Ամբողջ թափով ճեղքեցին ամբոխը, աջ ու ձախ սրի հարուածներ, ատրճանակի տրաքցներ տեղալով: Հեծելագնդի սեաներ առաջնորդը, նման Քրեղէն սուրը ձեռին հրեշտակին առաջնը խուժեց վրանը և . . . կանգ տռաւ, կարծես ձին գետին մխուեցաւ:

Աստուած իմ, վրանում այլ և՛ չկային ո՛չ վիրաւորներ և ո՛չ էլ բժիշկներ. կային արնաքամ դիակներ, որոնք նորանոր վէրքեր էին ստանում. նրանցից ոմանք շունչը փչել՝ միւսները դեռ ևս խռացնում էին հոգեարքի ջղածկութիւնների մէջ: Մեռնողների այս կռտորածի դաշտում իր շունչն էր փչում նաև վերջինը: Մի քանի սուենների ծայրին ցցած, օդի մէջ բարձրացրած, իր՝ թաշկինակի պէս սպիտակ, դէմքը դէմ էր արել փոքրիկ Տաթլովսկին արևի մուգ կարմիր փայլին: Այս նահատակ դէմքը մարող աչքերով, կարմիր արնոտ շերտով ոսկե: գոյն մազերից սկսած մինչև զղածկաբար ծամածուող շուրթերը, այնուամենայնկւ ճանաչեց իր ընկերոջը: Մեռնողը բազկի արագ շարժումով գցեց նրան մի կարմիր քան, իսկ մարող ձայնը կանչեց.

— Եակ մի՞ն, քրն' ջառ.

Վերջին նուերը, վերջին մտածմունքը, վերջին խօսքն էր այդ: Կարմիր թռչունի պէս իջաւ արնեշաղախ թաշկինակը

փախչում, ծրկւում էր փոքրիկ նտպաստակը՝ ձեան վրայ թողնելով համբ հետքերի զեգդագներ: Եւ այսպէս անվերջ դարուն ու ձմեռ յաջորդում էին իրար:

Երկու բան միայն անփոփոխ էր մնում. նախ՝ միայնութեւնն էր, որ այստեղ խոր լւսութեան մէջ համակել էր համայն ընութեւնը երկնքից երկիր. և երկրորդ՝ շարունակ ուսող ժամանակի անմահ հոսանքը, որ անդագար կըկնում էր՝ vae victis; vae victis! vae victis! (վայ յաղթուածներին)

Արագասլաց Քամին այլ ևս չէր ողբում. նրա բիւրեղ մարմինը հետզհետէ տարածում էր գերեզմանի հողաթմբի վրայ, աւելի և աւելի բարձր նախ մինչև ծառերի կատարները և ապա նրանցից էլ վեր շատ վեր, երկրի վրայ ամենայն ուժգնութեամբ թափահարուող թեւերի՝ ցասկոտ աղմուկով, նման սարդոստայնի ահագին ցանցի պէս սփոռուած հերարձակ մազերի, ցանցի, որ հազար ու մի զիզիներով աչք էր խտացնում:

Վերջապէս բարձր զգացումն, անհամար աստղերի արտափայլումով առկայծուած, տարածեց նա իր եթեր լայն թեւերը և անտառը թնդացըրեց իր հզօր կոչով.

— Gloria victis!

Գերեզմանի թմբից բաժանուեց, բարձրացաւ անտառի վրայ մըրկի արհաւելքով զարնուեց մուայլ երկնքին, թարթող աստղերին, արծաթափայլ ծիր կաթին և բացականչեց.

— Gloria victis!

Նա կըկին եջաւ երկրի վրայ, և, անհանգիստ, ցասումով ու սրբազն կատաղութեամբ համակուած՝ խաւարի աղմկող փոթորկի պէս պատռեց դաշտերի ջրերի ու անտառների քաղաքների ու գիւղերի վրայ տարածուած օդը և, երկրագունդը պատող, օդային տարածութիւնը թեւակոխող ու կըկին սարսող ձայնով, հնչեցըրեց.

— Gloria victis!

Այս կոչը լսելով՝ զարմանում էին դաշտերը, ջրերը, անտառները, գիւղերն ու քաղաքները, զարմանում էին երկրագունդն ու եթեր տարածութիւնը և զարմանալով հարցնում էին է, որ աշխարհին յայտարարում է այս խոշոր անլուր-երեւակայական և անսպասելի նորութիւնը. արդեօք հեքեաթը չէ, որ թեւառած թուշում է և գիշերներն աշխարհին պատմել է սկսում զարմանալի բաներ. թէ միւս մոլորակներից վերնե-

առւած ոգլներն են այդ աղքարարողը։ և կամ երազ ցնորք-ները չե՞ն, կամ անմարմին տեսիլները՝ ուշուականները։ Եւ ի՞նչ է յայտարարում այդ ձայնը. արդեօք աշխարհի վերածնութիւնը, թէ կործանումը։

Եւ արագասկաց Քամին սաւառնում էր ու սաւառնում անյայտ, անանուն, անտառային հոկայ գերեզմանից աւելի հեռու, և ամենութեք, — թէ՝ տարածութեան, թէ հեռաւորութեան, թէ ժամանակին, թէ յիշողութեան, և թէ որաերին, իւր հետ տանում է հեռաւոր ապագայի յաղթանակով հնչող հզօր կոչը։

— Gloria victis.

Ն. Քիւրդեանց.

\* \* \*

Սիրտս թռաւ երկինքն ի վեր  
ինչպէս մրբիկ ու կայծակ.  
Հոգիս առաւ արծուի թևեր,  
Վեր սլացաւ համարձակ։

Անհունի մէջ լազուր ծովում,  
Որ ծայր չունի ու սահման,  
Սիրտս աղատ, անվախ լողում,  
Ափ է վազում անսասան։

Եւ իմ հոգին նրան ընկեր  
ձիգ է թափում քաջի պէս,  
Սուրում, թռչում և անվեհեր  
ձեղքում ալիք փրփրադէղ...

Յարուրին Պետրոսեան

